Երանուհի Մանուկյան
Երևանի պետական և Եվրասիա միջազգային համալսարանների դասախոս, Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է տեղեկատվական քաղաքակրթության զարգացման արդի միտումներին, թե ինչպես են տեղեկույթի քանակական հոսքերը հանգեցնում հասարակության հիմնովին վերակառուցմանը: Տվյալ վերլուծության համար հիմք է հանդիսացել հայտնի հետազոտողների տեսական ու գործնական եզրահանգումները, որոնք որոշակի առումով միակողմանի են, ուստի նաև փորձ է կատարվել հաղթահարել տվյալ միակողմանիությունը:

Հիմնաբառեր. տեղեկատվական, քաղաքակրթություն, մոդեռն, հասարակություն, այլընտրանքային, հայեցակարգեր, սոցիալական, պարադոքս, փոխակերպումներ, սոցիոմշակութային, նույնականություն:

Ներածություն

Տեղեկատվական քաղաքակրթություն հասկացությունը բարդ, բազմաբովանդակ, բազմաշերտ երևույթ է, որի ձևակերպման հարցում միասական մոտեցումները բացակայում են: Մասնագիտական գրականության մեջ տվյալ հիմնախնդիրը վերլուծվում է փիլիսոփայության, մարդաբանության, տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական գաղափարախոսության և այլ ոլորտների համատեքստերում: Արդի քաղաքակրթության զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում կատարվում են այնպիսի փոխակերպումներ, որոնք սոցիալական համակարգը դարձնում են առավել այլընտրանքային, պարադոքսալ և անկանխատեսելի:

Մեթոդը և տեսական հիմքը

Ժամանակակից սոցիալական համակարգերը աչքի են ընկնում վարքի «տարօրինակ» տատանումներով ֆլուկտուացիա, «երկձյուղավորման» միտումներով բիֆուրկացիա և ճգնաժամային դրսևորումներով: Սոցիալական համակարգերի ծրագրավորումը և վերակառուցման հաշվարկը չափազանց դժվար խնդիր է, քանի որ, ի տարբերություն բնական համակարգերի, վերջիններս ավելի ակտիվ են արձագանքում իրականացվող փոփոխություններին, ինչն իր հերթին առաջ է բերում նախանշված նպատակից շեղում, պատասխան չծրագրավորված փոփոխություններ հենց նույն համակարգում: Հեղինակը կարևորել է այն մեթոդաբանությունը, ինչը հնարավորություն է տալիս քաոսը ուղղորդել կամ կառավարելի դարձնել: Տվյալ հետազոտության համար տեսական հիմք է հանդիսացել այնպիսի հետազոտողների տեսակետները, որոնք հիմնախնդիրը մասնագիտական գրականության մեջ քննարկում են երեք հիմնական տեսանկյուններից.

- սոցիալական (Թոֆլեր, Բաուման)
- քաղաքական(Թոյենբի, Հարությունյան,)
- մարդաբանական(Մարկուզե Գիդենս)

Տեղեկատվական քաղաքակրթության մասին մասնագիտական գրականության մեջ եղած առկա մոտեցումները

Ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվությունը այնքան վճռական նշանակություն և դերակատարություն ունի, որ դարձել է նոր տիպի հասարակության կերտման նախապայման: Տեղեկատվության քանակական հոսքերը հանգեցնում են ոչ միայն որակական, այլև՝ կյանքի ոճի և ռիթմի փոփոխության: Մարդիկ նախապես հարմարված լինելով տարածաժամանակային իրենց չափումներին, հայտնվում են նոր իրականության մեջ, որը լի է անհասկանալի և անկանխատեսելի երևույթներով:

Այսինքն՝ տեղեկատվական նորարարության նման ծավալները ենթադրում են սոցիալական կյանքի հիմնովին վերակառուցում, քանի որ վերջինս նշանակալի ազդեցություն է թողնում հասարակության վրա: Վերլուծաբանները, ովքեր իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հասարակության միկրո, մակրո, մեզո մակարդակների վրա, նկատում են, որ հասարակության միկրո տարրերը ի վիճակի են հեղափոխել մեր ապրելակերպը, և այդ գործընթացը, իբրև ուժգին մակընթացություն, հնարավոր չէ այլևս կանգնեցնել: Հայտնի ֆուտուրոլոգ (ապագայագետ) Է. Թոֆլերի կարծիքով աշխարհը հետզհետե ձևավորվում է երեք տեխնոլոգիական նորամուծությունների ալիքներով, որոնցից առաջինը բնութագրվում է ագրարային հեղափոխության, երկրորդը՝ արդյունաբերական, իսկ երրորդը՝ տեղեկատվական հեղափոխության դրսևորումներով, ինչը վկայում է սոցիոմշակութային նոր միջավայրի ձևավորման մասին (Թոֆլեր, 2004, էջ 97-112) :

Ժամանակակից աշխարհում ձևավորվում են գիտելիքի երկու նոր տի-

պեր, որոնք տեղեկատվական նվաճողական գաղափարախոսության այլընտրանքներն են. բնապահպանական գիտելիք, որը զգուշացնում է քաղաքակրթության զարգացման էկոլոգիական և պատմափիլիսոփայական՝ որը զգուշացնում է սոցիալական ծախքերի մասին: Գիտելիքի այս տիպերը բարձրաձայնում են մինչև վերջին ժամանակներս ձայնազուրկ օբյեկտների մասին, որոնք արդիականացման ընթացքում կարող են կործանվել: Լուրջ խնդիրներ ունեցող այդ օբյեկտներից մեկը բնական միջավայրն է, որն անդառնալի կորուստներ է կրում, մյուսը սոցիոմշակութային միջավայրն է, աշխարհի լուսանցքային այն մեծամասնությունը, որի հաշվին դուրս են գրում վնասները: Պարզվում է, որ ոչ բնական, ոչ էլ սոցիոմշակութային միջավայրն այլևս ի վիճակի չեն տանել առաջընթացի ծանրացող բեռը: Առաջընթացն այնպիսի առասպելի ուրվական է, որի մեջ զետեղված են կերպարներ, որոնք մղում են գործունեության: Մեկ այլ մեկնաբանության համաձայն առաջընթացի չափանիշը քաղաքակրթության մակարդակն է: Նա քաղաքակրթության ծագումը բացատրում է ռացիոնալության սկզբունքի տրամաբանությամբ, այսինքն՝ մեքենայական աշխատանքի միջոցով պահանջմունքների բավարարմամբ, ինչը հանգեցնում է բռնության, որի պարագայում «մարմինը և հոգին վեր են ածվում օտարված աշխատանքի գործիքների» (Մարկուզե, 2003, էջ 47): Վերջնական արդյունքում «ագրեսիվ բնազդների էներգիան սնում է չընդհատվող փոփոխությունը, բնության տիրապետումն ու շահագործումը՝ հօգուտ մարդկության: Փոփոխելով, կործանելով, ոչնչացնելով, փոշիացնելով առարկաներն ու կենդանիներին (պարբերաբար՝ նաև մարդկանց) մարդն ընդլայնում է իր իշխանությունն աշխարհում և շարժվում քաղաքակրթության աստիճաններով՝ հասնելու ավելի մեծ հարստության» (Մարկուզե, 2003, էջ 51): Այս մոտեցումը ավելի ակնհայտ է դարձնում քաղաքակրթության ներկայիս հաղթարշավը: Թվում է՝ դա պետք է նպաստի մարդու ինքնահիրացմանը, ազատագրմանը, բայց իրականում այլ նպատակներ է հետապնդում, ինչն անհերքելի է: «Բռնությունը և դժբախտությունը պետք է գոյություն ունենան, եթե գոյություն ունի քաղաքակրթությունը» (Մարկուզե, 2003, էջ 213): Այսինքն՝ քաղաքակրթությանը բնորոշ է ներքին հակասականությունը, որտեղ մարդկային կեցության արժանիքները իրականում ենթարկվում են ոչ հոգևորի ոլորտին, իսկ արդյունքում ռացիոնալությունը դառնում է սոցիոմշակութային պարադոքսների սպասարկուն: Հասարակական առաջընթացի պարադոքսալությունը Է. Թոյնբին բացատրում է հետևյալ կերպ. «Տեխնիկայի պատմությունը մինչ այժմ մեր համար չբացահայտելով հասարակական առաջընթացի ոչ մի օրենք, այնուամենայնիվ, բացահայտում է այն սկզբունքը, որով պայմանավորված է տեխնիկական առաջընթացը: Այդ սկզբունքը կարելի է սահմանել որպես առաջ ընթացող պարզեցման օրենք» (Տոենբի, 1991, էջ 234): Ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Մարկուզեն՝«ոչ տեխնոլոգիական առաջընթացը, ոչ բնության ու մարդու ռացիոնալացումը չեն կարողացել և չեն կարող վերացնել աշխատանքի օտարվածության անհրաժեշտությունը, մեխանիկական՝ բավականություն չպատճառող աշխատանքի անհ-

րաժեշտությունը, ինչը անհատին չի խոստանում ոչ մի ինքնակայացում» (Մարկուզե, 2003, էջ 193): Ուստի տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործումը հանդիսանում է միայն արտաքին չափանիշ, այսինքն՝ արդի քաղաքակրթական նվաճումները փայլեցրեցին մակերևույթը, սակայն մոդիֆիկացրեցին կամ ձևախեղեցին հումքը: Տեխնածին քաղաքակրթության ներկա շրջանում, տեխնիկապես վերազինված արտադրության պայմաններում գերկենտրոնացվածությունը տնտեսության, քաղաքականության, քարոզչության, տեղեկատվական ոլորտներում ձևավորել է ինքնատիպ մի միջավայր՝«այս համընդհանուր անհրաժեշտության աշխարհում խղճի համար տեղ չթողնելով: Հարյուրավոր և հազարավոր մարդկանց ոչնչացումը կախված է մեկ մարդու ազդանշանից, որը հետագայում կարող է հայտարարել իր անմեղության մասին և շարունակել ապրել երջանիկ՝ առանց խղճի խայթ զգալու» (Մարկուզե, 2003, էջ 12):

Ժամանակակից քաղաքակրթությունը կարող է ապացուցել իր անմեղությունը միայն այն դեպքում, եթե կրկին վերադառնա առողջ բանականության սկզբունքներին: Որքանո՞վ է այդ վերադարձը հավանական և հուսալի, արդյոք համաշխարհային հանրույթը կարո՞ղ է ապացուցել, որ տեխնիկական քաղաքակրթության սոցիալական և էկոլոգիական հետևանքները հաղթահարելի են: Եվ վերջապես, ներկայիս գլոբալ խնդիրներն արդյո՞ք մատնանշում են մոդեռն դարաշրջանի համար սովորական դարձած ստեղծագործության ձևից հրաժարվելու անհրաժեշտությունը, թե՞ ընդհակառակը, ստեղծագործական գործընթացն արմատականացնելու անհրաժեշտությունը՝ նրա առարկա դարձնելով մեր կեցության այն ձևերը, որոնք կրում էին քողարկված, բնական-ավանդութային բնույթ: Որպես վերջինիս օրինակ կարող էր ծառայել անցումը էկոլոգիական «հավաքչությունից» (էկոլոգիական ծախքերը չփոխհատուցող տեխնիկական քաղաքակրթության ձրիակերությունից) դեպի էկոլոգիական արտադրության:

Մեր առջև պատմության փիլիսոփայության երկու այլընտրանքային հայեցակարգեր են. համաձայն դրանցից մեկի՝ մոդեռնը մարդկության վերջնական ընտրությունն է, որը պետք է շարունակի առաջընթացի հաղթարշավը, իսկ համաձայն մյուսի՝ փոխակերպումների առաջադիմական դարաշրջանը դա անցողիկ ու միջանկյալ ձև է անկայունության հին ավանդական և նոր, գալիք տիպի միջև:

Մի բան ակնհայտ է, որ կայունություն կատեգորիան այլևս չի կարող համարվել գիտակցության միայն ավանդական կամ պահպանողական-վերականգնողական տիպի կողմնորոշիչը: «Կայունություն և զարգացում» բանաձևը, ստացել է մարդկության՝ բոլորի կողմից ընդունելի կողմնորոշիչի կարգավիճակ: Բայց այստեղ արդյո՞ք մենք գործ չունենք անլուծելի անտինոմիայի հետ. եթե կա զարգացում:

Յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ, եթե ուզում է լսվել և հասկացվել, պետք է իր ազգային և տեղական խնդիրները «թարգմանի» բոլորին հասկանալի լեզվով, եթե չի ուզում սպրդել պատմության թատերաբեմից՝ դառնալով ազգագրական «հումք» առավել կենսունակ ազգերի հա-

մար: Համընդհանուր կամ արմատական փոխակերպումների ճանապարհները, թեև հակասական և տարընմբռնումային են, բայց անհրաժեշտ է ընդառաջ գնալ այդ փոփոխություններին, քանի որ աշխարհին նոր կարգ ու կանոն է պարտադրվում, իսկ նրան, ում այդ մայրուղիները կշրջանցեն, կկրեն լիակատար սնանկություն:

Տեղեկատվության տարածման և փոխանակման գործընթացների ակտիվացումը վկայում է, որ արդի հասարակություններում ընթանում են տեղեկատվական նոր համակարգերի ներդրման գործընթացներ, ինչը ենթադրում է վերահսկողության բարձր մակարդակ: Ավանդական և հետավանդական հասարակությունները բնութագրվում են վերահսկողության տարբեր միջոցներով և մակարդակներով: Հայտնի սոցիոլոգ Է. Գիդենսի կարծիքով, եթե ավանդական հասարակություններին բնորոշ պայմանականությունները սահմանափակում էին մարդկանց կյանքն ու գործողությունները, քանի որ կառուցվում էին վերահսկողության անձնային՝ հարևանների, բարեկամների, ընկերների և այլնի հարաբերությունների վրա, ապա հետավանդական հասարակություններում սոցիալական խմբերի և խավերի միջև փոխազդեցությունը անդեմ և անանուն է: Այլ կերպ ասած՝ վերահսկողության անձնային մակարդակը փոխարինվում է վերանձնային, անդեմ հարաբերություններով (Գիդդենս, 2005, էջ 70):

Տեղեկատվական հասարակությանը բնորոշ պարադոքսների և տարընմբռնումների առանձնահատկություններից մեկն այն է, որ ազատական մշակույթը, թեև ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում, բայց և ավելի վերահսկելի է դարձնում սրանց կյանքը և ապրելակերպը: Պարադոքսն այն է, որ այլընտրանքայնության և ինքնադրսևորման հնարավորությունների ազատությունը էլ ավելի է մեծացնում մարդկանց կախվածությունը անցյալի և ապագայի հնարավոր իրադարձությունների իմացությունից (Հարությունյան, 2006, էջ 7):

Տեղեկատվական հասարակության արդի փուլը բնույթով երկփեղկված է, մի կողմից մարդիկ իրենց զգում են չկողմնորոշված, անկայուն, շրջապատված օտար մարդկանցով, մյուս կողմից՝ ձերբազատված հասարակական թաքնված կապերից և միջոցներից: Փաստորեն հետավանդական հասարակություններում անձը երկձեղքված է, իսկ հարաբերությունները՝ դիմազրկված, ինչը մի կողմից նրան ազատում է անձնային վերահսկողության անմիջական ներգործությունից, մյուս կողմից, սակայն, կանխորոշում է վերահսկողության ավելի բարձր մակարդակ: Հարկ է նկատել նաև, որ ստեղծվում են այլընտրանքային միջոցներ, որոնք նույնքան այլընտրանքային են դարձնում կենսակերպը՝ այն ձերբազատելով առընթեր միօրինակությունից ու գծային միապաղաղությունից: Բայց սոցիալական գործողությունների ընթացքը այսքանով չի ավարտվում, քանի որ հետավանդական հասարակությանը բնորոշ է նաև սոցիալական զանազան ինստիտուտների միջոցով գերկազմակերպվածության հաստատումը, ինչն էլ ավելի է բարձրացնում մարդկանց սոցիալականացման հեռանկարը:

Պարադոքսն այն է, որ արդի հասարակություններում մարդիկ, թեև

շրջապատված են օտարներով, բայց նրանց մասին ավելի շատ են տեղեկացված, քան ծանոթ–հարազատներով շրջապատված փակ հասարակություններում: Բանն այն է, որ անհրաժեշտ համակարգչային գիտելիքներ ունենալու դեպքում առանձին անհատները կամ սոցիալական սուբյեկտները հնարավորություն են ստանում առավել մեծ քանակությամբ տեղեկություններ հավաքել այլ մարդկանց կյանքի մանրամասների մասին, ինչը հնարավորություն է տալիս առավել գիտակցված ընտրություն կատարել: Այս առնչությամբ պարադոքսը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ինչքան շատ ենք տեղեկանում ուրիշների մասին, այնքան հեշտ է ինքնահիրացնել մեր անհատական ներուժը՝ կատարելով ճիշտ ընտրություն (Ուեբստեր, 2004, էջ 284):

Ժամանակակից հասարակության մեջ սոցիոմշակութային պարադոքսների դրսևորման նախապայման է հանդիսանում նաև համընդհանուր կրթական բարձր մակարդակը:

Տեղեկատվության վերաբաշխումը արտադրական գործընթացի հումքն է, իսկ կրթությունը՝ ոչ ֆիզիկական աշխատանքի հիմնական ցուցանիշը: Կրթված մարդիկ, թեև «շատ բան» գիտեն, բայց այդ գիտելիքներից շատերը պահանջարկ չունեն: Պարադոքսն այն է, որ ժամանակակից մարդիկ, թեև առավել ինֆորմացված են, բայց ունեն համեմատաբար քիչ անհրաժեշտ գիտելիք, եթե վերջինիս տակ հասկանանք ընդհանուր տեսական գիտելիքների ադապտացիան կոնկրետ արտադրական իրավիճակներին, տեղի և ժամանակի պայմաններին: Ինչ վերաբերում է գիտելիքների և տեղեկատվության չօգտագործված մասին, ապա այն դառնում է չբավարարված հավակնությունների աղբյուր: Դրանով է բացատրվում տեղեկատվական հասարակության հաջորդ պարադոքսը՝ ավելի կրթված շերտերը հաճախ հանդիսանում են ավելի քիչ իրատեսական մտածողներ և հաճույքով սնվում են ժամանակակից ուտոպիաներով, ինչը միշտ տանում է քայքայման և կործանման, երբ փորձում են այդ գիտելիքներն իրացնել: Բանն այն է, որ իր չօգտագործված տեսությունների մասով գիտությունը պարունակում է ուտոպիայի տարրեր և ընդունակ է սնել իռացիոնալ խորհրդանիշների աշխարհը: Մինչդեռ ազատական մշակույթը կարող է արդյունավետ գործառնել միայն այն դեպքում, եթե ամենօրյա կյանքում մարդիկ ղեկավարվում են արագացող սոցիալական ռիթմին համարժեք սկզբունքներով (նախաձեռնություն, անհատապաշտություն, կուռքապաշտության մերժում և այլն), և ոչ թե արդեն անցյալում մնացած կյանքի սկզբունքներով և խորհրդանիշներով (Սողոմոնյան, 2005, էջ 16):

Փաստորեն ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու կամ ցանցի մասնակից դառնալու նախապայման են ոչ այնքան ֆիզիկական ջանքերը, ծագումնաբանությունը, որքան խելացիությունը, հնարամտությունը, գաղափարները, ստեղծագործական տաղանդը և այլն: Ուստի զբաղվածության ոլորտում էական չափանիշ է ոչ այնքան տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, որքան տեղեկատվության փոխակերպվող հնարավորությունները մարդկանց կրթելու և վերամասնագիտացնելու մի-

ջոցներով: Տեղեկատվական հասարակության գաղափարախոսների (Դ. Բելլ, Մ. Կաստելս, Հ. Շիլլեր և այլն) կարծիքով ժամանակակից գործընթացների շարժիչ ուժ են հանդիսանում նրանք, ովքեր կարողանում են տեղեկատվություն օգտագործել և փոխանակել, որոնց աշխատանքը պահանջում է ամենօրյա արարում:

Հարկ է նկատել նաև, որ քաղաքակրթության զարգացման ողջ ընթացքում սոցիալական համակարգերը արարել և փոխանակել են տեղեկատվություն և այդ իմաստով միամտություն կլինի կարծել, թե այն միայն արդի դարաշրջանին բնորոշ երևույթ է: Այս նախապայմաններից ելնելով, Մ. Կաստելսը նախընտրում է օգտագործել «տեղեկատվական կապիտալիզմ» արտահայտությունը, որը նշանակում է գիտելիքի ազդեցություն գիտելիքի վրա, ինչը առավել անհոգի և անխիղճ է, ավելի վտանգավոր է և հզոր, քան երբևէ եղել է: Այս առնչությամբ դեռևս պահպանվում է չտարորոշված հակադրություն. արդյո՞ք այս դեպքում գիտելիքի աճ է տեղի ունեցել, թե՞ մեր ճանաչողական ունակություններն են մեծացել: Մինչդեռ, չնայած առկա հակադրությանը, գրեթե միանշանակորեն ընդունվում է, որ մենք ապրում ենք տեղեկատվական դարաշրջանի անցումային փուլում, որի գլխավոր առանձնահատկությունը մարդկանց, կառույցների, պետությունների գործունեության համատեղության և վերահսկողության ցանցերի ձևավորումն է (Ուեբստեր, 2004, էջ 131):

Ժամանակակից աշխարհում թե շուկայի և թե անմիջական արտադրության ոլորտում տեղեկատվական ցանցերի համընդհանուր տարածումը միանշանակ գնահատվող գործընթաց չէ, քանի որ ազգային պետությունների համար մեծ վտանգ է պարունակում: Որքան էլ սպառնալից է ազգային պետությունների համար ճգնաժամը, այնուամենայնիվ, այլընտրանք չկա, քանի որ արևմտյան քաղաքակրթության կառույցներին անդամակցությունը նախանշում է ինչպես համընդհանուր դիրքորոշման ձևավորում, այնպես էլ խաղի կանոններին համաձայն պատասխանատվության ստանձնում (Բելլ, 1999, էջ 158): Իսկ այդ ամենը չպետք է ենթադրի փախուստ դեպի ինքնության խորքերը (Փոքր Միերի օրինակով, ով Ագռավաքարում բանտված սպասում է՝ մինչև աշխարհը փոխվի և վերակառուցվի), այլ ընդհակառակը՝ կենսաշխարհի պատմական ապրիորիների վերանայում՝ ժամանակին համապատասխան վերաիմաստավորելու և փոխակերպելու նախապայմանով: Այսպիսով, ազգային պետությունների շարունակականությունը կամ անընդհատությունը ապահովված է ոչ այնքան ներհայեցումով, որքան՝ դրան զուգընթաց ապագայի համար սոցիալականացման նոր հեռանկարների ուրվագծմամբ: Իսկ սոցիալականացում նշանակում է, որ մարդիկ որոշակի մշակութային համակարգից յուրացնում են տվյալ պայմանների համար անհրաժեշտ և կենսական այնպիսի արժեքներ, վարքի կարգավորման ներքին և արտաքին միջոցներ, որոնք հանդես են գալիս գաղափարների, ակնկալիքների տեսքով՝ իրենց հերթին հանդիսանալով հետագա գործառնության և վերարտադրության նախապայման:

Տեղեկատվական հասարակության մեջ աճում են անհատական աշխա-

տանքի ծավալները: Նման իրավիճակներում մարդը կարող է դիմակայել ցանցի «ճնշումներին», եթե ամուր կանգնի սեփական ոտքերի վրա և գիտակցի, թե ինչ է անում և ինչ է անելու հետագայում: Համակարգային և արմատական փոխակերպումներին հարմարվելու համար մարդը պետք է հրաժարվի պասիվությունից, քանի որ նա մեծ հաջողությունների կարող է հասնել միայն սոցիալական ակտիվություն դրսևորելով, մինչդեռ տեղեկատվության համընդհանուր տարածումը մի կողմից նպաստում է կենցաղի զարգացմանը, մյուս կողմից՝ կենցաղի գերիշխումը մեծ վտանգ է պարունակում մշակույթի համար: Մ. Կաստելսի կարծիքով տեղեկատվությունը, թեև աստիճանաբար զանգվածայնանում է, բայց մենք ապրում ենք ոչ թե «համաշխարհային գյուղում», այլ խրճիթում, որում ապրելու միակ միջոցը ցանցային համակարգի մեջ ընդգրկվելն է (Ուեբստեր, 2004, էջ 137): Ցանցին ամբողջարկվելը միատարր գործընթաց չէ: Այն, մասնավորապես, նույնականության ճգնաժամն առավել շոշափելի և տեսանելի է դարձնում: Բանն այն է, որ տեղեկատվական հասարակություններում ավանդույթների գործառույթները գնալով նվազում են և կոլեկտիվ նույնականության ձևավորման համար ստեղծվում են դժվարություններ ու արգելքներ: Ավանդույթը, ինչպես իրավացիորեն նկատում է Է. Մարգարյանը, սոցիալապես կարգավորված կարծրատիպերում խմբային փորձի դրսևորման ձև է, ինչը կուտակվում և վերարտադրվում է տարբեր մարդկային կոլեկտիվներում (Մարգարյան, 2000, էջ 77):

Արդի քաղաքակրթության համակարգային փոխակերպումներն ու տեղաշարժերը, որոնք ընթանում են ոչ միայն հասարակական համակարգերի հիմնական ոլորտներում ու կառույցներում, այլև սոցիալական սուբյեկտներին բնորոշ մի շարք սոցիալ-հոգեբանական և մշակութային կազմավորումներում, առանցքային նշանակություն ունեն սոցիումի հետագա զարգացման համար: Այդ փոխակերպումների հետևանքով զգալիորեն մեծանում է անորոշության և տագնապի զգացողությունը, քանի որ օրեցօր բացահայտվում են սոցիոմշակութային վերափոխումների ստվերային կողմերը և հնարավոր վթարների հետևանքները: Մենք ապրում ենք «վթարային» հասարակությունում:

Սոցիոմշակութային նույնականությունը անհատի կամ խմբի ինքնագիտակցությունն է, որի շնորհիվ մարդիկ հասկանում են, որ իրենք օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնցով տարբերվում են ուրիշներից: Հետազոտողների մեկ այլ խումբ գտնում է, որ սոցիոմշակութային նույնականությունը մտացածին, հորինված հասկացություն է: Որոշ հեղինակներ նույնիսկ հանգում են պարադոքսալ եզրակացության, գտնելով, որ նույնականությունը նման է մեղքի. որքան էլ որ մենք հակադրվենք, այնուամենայնիվ չենք կարող խուսափել դրանից (Բաուման, 2005, էջ 122): Սոցիոմշակութային նույնականության առանձնահատկություններն ունեն քաղաքակրթական խորը արմատներ, որի մասին հիշում են այն ժամանակ, երբ չկա վստահություն սեփական պատկանելիության վերաբերյալ: Մարդը չի կարող կամ չգիտի, թե ինչպես վստահեցնի շրջապատին, որ հասարա-

կության մեջ նա իրավացիորեն զբաղեցնում է իր տեղը: Զ. Բաումանի, Է. Գիդդենսի և այլոց կարծիքով մենք ապրում ենք նույնականության ճգնաժամի դարաշրջանում, երբ վիրտուալ աշխարհը և զանգվածային տեղեկատվության միջոցները ոչնչացնում են ժամանակների հետ եղած անընդհատությունը՝ մարդուն պարտադրում առընթեր գլուխգործոցներ, ստիպում մոռանալ անցյալը և չմտածել ապագայի մասին: Սակայն նմանատիպ իրավիճակը նոր չէ, դեռևս Պասկալի ժամանակներից մարդը մահվան վախից փրկություն էր փնտրում զվարճանքներում: Պարզապես այսօր զվարճանքը դարձել է ամենակարող ուժ, գրեթե Աստված, ինչն էլ, իր հերթին հանգեցնում է հոգևոր ճգնաժամի:

Տեղեկատվական հասարակությունը մարդուն ներքաշում է վիրտուալ իրականության մեջ, որը շատ նման է թմրանյութի ազդեցությամբ ձեռքբերված նիրվանայի: Ժամանակակից քաղաքացին ամենօրյա ձանձրույթը փարատելու նպատակով փախչում է հեռուստաէկրանի կամ համակարգչի մոնիտորի մոտ՝ այնտեղ գտնելով զվարճանքի ինչ-որ առաջարկ: Վիրտուալ աշխարհում տիրող պայմանական, պատահական, կարճատև հարաբերությունները ներթափանցում են իրական աշխարհ: Եթե նոր ժամանակներում նույնականության հետ կապված գլխավոր խնդիրը երկարակեցությունն էր, որն ակնհայտ դարձավ նաև հայ ժողովրդի պարագայում, ով իր պատմական կյանքի տևական ընթացքի տարբեր դարաշրջաններում գտնվելով հելլենիստական, միջնադարյան, եվրոպական, այնուհետև՝ արևմտյան մշակույթների հետ փոխազդեցությունների ոլորտում՝ հայ մշակույթը դրանց պարզ բաղադրիչը չի դարձել, այլ ծավալել է իր սեփական ներքին կարողականությունները հանրային կյանքի կազմակերպման, այն նոր ձևերով, որոնք հատուկ են եղել այդ դարաշրջաններին և քաղաքակրթություններին: Եվ այդ հանգամանքն էլ՝ յուրաքանչյուր դարաշրջանում և յուրաքանչյուր քաղաքակրթության շրջանակներում, ապահովվել է հայ մշակույթի զարգացման անընդհատությունը և նրա»պատմական ես-ի», նրա ինքնության դիախրոնիկ ամբողջականությունը (Գևորգյան, 2005, էջ 81): Մինչդեռ այսօր մարդիկ մտածում են այն մասին, թե ինչպես խուսափեն պատասխանատվությունից և պարտականություններից: Քաղաքակրթության զարգացման ընթացքը ցույց տվեց, որ այսպիսի աշխարհում ըստ անհրաժեշտության տարբեր նույնականություններ կարելի է ընդունել և դեն նետել, ինչպես հնաոճ մի զգեստ:

Այժմ փորձենք պարզել, թե ինչ է կատարվում սոցիոմշակութային անորոշության մեջ հայտնված մարդու հետ: Հետազոտելով տեղեկատվական հասարակությանը բնորոշ կենսական ռազմավարությունները, որոնք ուղղված են այն բանին, որպեսզի մարդուն «ազատագրեն» ամեն տեսակի նույնականություններից, Զ. Բաումանը առանձնացնում է ժամանակակից մարդու չորս հիմնական մարդաբանական տիպեր. «թափառաշրջիկ», «խաղամոլ», «զբոսաշրջիկ» և «դատարկաշրջիկ» (Բաուման, 1995, էջ 134):

Ժամանակակից իրականությանը բնորոշ խորհրդանիշներից մեկը դատարկաշրջիկն է: Այս մարդաբանական տիպը հանդես է գալիս որպես իր

ժամանակի նմանակման վարպետ. անգործ թրև գալ, նույնն է, թե ինչ-որ հասարակության անդամ լինել, բայց չպատկանել իրականությանը և օտար լինել նրա համար, լինել ամբոխում, բայց չպատկանել նրան: Հաճախ դատարկաշրջիկին նկարագրում են տարանջատված դրվագների հաջորդականության տեսքով, իրադարձությունների շարք՝ առանց անցյալի և հետևանքների, որտեղ մարդիկ ընկալվում են որպես վայրկենական անցորդներ, հանդիպումները ներկայանում են որպես «ոչ հանդիպումներ»:

«Դատարկաշրջիկը» կարող է իրեն ներկայացնել իբրև ողբերգակ և ռեժիսոր, որի ձեռքերում են այլ մարդկանց կյանքի կապերը, բայց նա երբեք չի ներխուժում և չի միջամտում նրանց ճակատագրերին: Նա վախենում է իրական կյանքի և արարքների պատասխանատվությունից և, այդ պատճառով էլ կյանքը ընկալում է կինեմատոգրաֆի պես՝ ոչ լուրջ: Նա խաղում է իրականության հետ, ինչպես վիրտուալ ծածկույթի՝ իր համար ստեղծում է ամբողջությամբ անվտանգ, պատսպարված և ներխուժումներից պաշտպանված միայնակ մոնադի աշխարհ, որտեղ անծանոթների ֆիզիկական ներկայությունը չի թաքցնում և չի խախտում իր հոգեբանական անհասանելիությունը (Բաուման, 2005, էջ 175):

«Դատարկաշրջիկների» մարդաբանական տիպը շրջում է հասարակության մեջ՝ դեմքին անխոով լքվածության դիմակ: Նրանց ականջներն ասես ամուր փակված են ականջակալներով. իրական աշխարհում նրանք միայն ներկա են, ազատ թրև են գալիս, թեև իրականում խորասուզված են մտացածին աշխարհում, որպեսզի ավելի շատ հեռանան իրականությունից: Սոցիոմշակութային նույնականությունից խուսափելու ձգտումը երևում է հայտնի դիզայներական ֆիրմաների գովազդային պաստառներում: Կարելի է ասել, որ ժամանակակից հասարակության արտադրությունը կառուցված է որպես «դատարկաշրջիկների» ժամանցի վայր: Այստեղ նրանք գտնվում են աղմկոտ ամբոխում, կարող է հնչել շատ բարձր երաժշտություն, այնուամենայնիվ, նրանք միշտ հոգեպես մնում են առանձին՝ լցված անհանգստության և լքվածության տագնապով:

Մի փոքր այլ մարդաբանական տիպ է «թափառաշրջիկը»՝ ‹‹բնակության որոշակի վայր չունեցող››, ժամանակակից քաղաքակրթության խրտվիլակը: Նրա առաջխաղացումը անկանխատեսելի է, նա չգիտի և չի էլ ուզում իմանալ, թե վաղը որ ուղղությամբ կշարժվի: Ուր էլ որ հայտնվի «թափառաշրջիկը», ամենուր նա օտար է, նրան անընդհատ ձգում են նորանոր վայրեր: «Անքնության» ռազմավարությունն ունի իր գրավչությունը՝«հիմա՝ այստեղ, հետո՝ կտեսնենք», և հենց սրանով էլ ընտրության ազատության պատրանք է ստեղծվում: Այսօր թափառաշրջիկներ են դառնում ոչ թե նստակյաց կյանքին չհարմարվելու պատճառով, այլ այն վայրերի սակավության՝ որտեղ կարելի է բնակություն հաստատել: «Հենց ինքը՝ աշխարհը, վերափոխվում է թափառաշրջիկի, և դա շատ արագ է կատարվում» (Վասիլենկո, 2010, էջ 123): Մեծ քաղաքները դառնում են թափառաշրջիկներին ձգող կենտրոններ զուտ տնտեսական դրդապատճառներով. այստեղ կարելի է գումար վաստակել և մի քանի ամիսների ընթացքում ստանալ

այնքան, որքան հնարավոր չէ ստանալ մեկ տարվա ընթացքում փոքր քաղաքներում ծանր աշխատանք կատարելիս: Պատահական չէ, որ ժամանակակից մեծ մայրաքաղաքները լեցուն են տարբեր ազգերի ներկայացուցիչներով, որոնք թափառաշրջիկներ են դարձել ակամայից, բայց ոչ իրենց կամքին հակառակ: Մարդը ստիպված է անընդհատ տեղափոխվել՝ աշխատանք փնտրելու համար, և քանի որ մշտական գումար վաստակելու վայր չկա, նա մի աշխատավայրից մեկ այլն է տեղափոխվում:

Արդի հասարակություններում համեմատաբար բարձր դիրք է գրավում «զբոսաշրջիկը»՝ բավականին ապահովված մի մարդ, որը գիտակցաբար և պարբերաբար փնտրում է փորձություններ, նոր զգացումներ, ուզում է ընկղմվել անծանոթ, էկզոտիկ մթնոլորտի մեջ և, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասը պետք է տրամադրի աշխատանքին, թեև հոգով պատկանում է զբոսաշրջության անուրջների աշխարհին: Նա ստիպված համաձայնվում է ամենօրյա ծանր աշխատանքին, որպեսզի գոնե մեկ շաբաթյա հանգիստ ունենա իր նախընտրած վայրում: Այս երևութական կյանքը ամբողջությամբ կառուցված է գեղագիտական չափանիշների հիման վրա: Այն, ինչը զբոսաշրջիկը պատրաստ է գնել և ինչի համար նա վճարում է, կարելի է բնութագրել որպես չձանձրանալու իրավունք, ազատություն ամեն ինչից: Կարելի է ասել, որ ժամանակակից զբոսաշրջիկի աշխարհը պատվիրված և վճարված փորձություն է: Ի տարբերություն «թափառաշրջիկի», զբոսաշրջիկն ունի ապաստարան: Այն մի վայր է, որտեղ կարելի է հանգստանալ փորձություններից: Կացարանային հարմարավետության անխռովությունը դրդում է զբոսաշրջիկին փնտրել նոր, չտեսնված ուրախություններ, փորձություններից զերծ որոնումը կյանքը դարձնում է անվտանգ, անվնաս զբաղմունք (Բաուման, 2005, էջ 124):

Սկզբունքորեն այլ կենսական ռազմավարություն է ընտրում «խաղամոլը»՝ մարդ, որին գրավում է ռիսկի, խաղարկման լարված աշխարհը: Խաղի նպատակը հաղթանակն է, և, այդ պատճառով էլ խաղը տեղ չի թողնում խղճահարության, կարեկցանքի, փոխօգնության համար: Ինչ-որ տեղ խաղը նման է պատերազմի, որը թողնում է ոչ միայն չարություն, այլև հոգևոր վերքեր: Խաղում հենց ինքը՝ աշխարհն է խաղում, հաջողությունը և անհաջողությունը խաղացող աշխարհի քայլերն են: Խաղը մարդուն ազատում է խղճի խայթից: Հետարդիականության դարաշրջանի հասուն մարդկանց տարբերակիչ գիծն ամբողջությամբ խաղին տրվելու ձգտումն է: Այսօրվա աշխարհը պատկանում է «խաղամոլներին», որոնց համար հաճախ խաղագումար է հանդիսանում նաև մարդկային կյանքը: Դա այն աշխարհն է, որտեղ պատվիրված սպանությունները դարձել են կյանքի մի մասին առընթեր: Առանց կանոնների խաղը խաղերից ամենավտանգավորն է, քանի որ նրանում չկա համաձայնություն, հաղթողն այստեղ ստանում է ամեն ինչ, իսկ մնացածները կորցնում են ամեն ինչ: Այսպիսի խաղը սպառնում է վերաճել քաղաքացիական պատերազմի և քայքայել հասարակությունը (Բաուման, 1995, էջ 139):

Նշված չորս ռազմավարությունների քաղաքակրթական խոցելիությունն

այն է, որ «դատարկաշրջիկը», «թափառաշրջիկը», «զբոսաշրջիկը» և «խաղամոլը» հասարակությունից, մարդկային պարտականություններից և կապերից փախչում են դեպի խաղի, զվարճանքների և պատահական հարաբերությունների աշխարհ: Այս փախուստն իսկ ցույց է տալիս, որ քաղաքակրթության զարգացման ընթացքը իրոք պարադոքսալ է. հասարակական կապերի ու կախվածությունների խորացման արդյունքում ի վերջո ձևավորվում են այդ կապերից ու կախվածությունից խուսափող «մեկուսացված անհատներից» կազմված հասարակություն: Սա ազատ և ինքնիշխան հասարակություն կերտելու անհաջողություններից մեկն է, բայց ոչ վերջինը: Բանն այն է, որ բացի սոցիոմշակութային արմատական փոխակերպումներից գոյություն ունեն փոքր տեղաշարժեր, որոնք կապված են մեծ կոլեկտիվ հորիզոնների վատնման հետ և տանում են գոյության ամբողջական աննպատակայնությանը: Պարզվում է, որ մարդը կարող է չարաշահել ազատությունը տարբեր ձևերով: Վաղ մոդեռնի մարդը, ով դեռ չէր վատնել իր ուժերն ու մեծ ինքնավստահությունը, ունակ էր ներքաշվել արկածների մեջ, որոնք դուրս են գալիս ցանկացած բանական նորմերի սահմաններից:

Բայց մարդը կարող է ինչի մասին վկայում է քաղաքակրթության զարգացման փորձը, օգտագործել ստացված ազատությունն այն բանի համար, որպեսզի լվանա ձեռքերը և հրաժարվի սոցիալական այն աշխատանքներին մասնակցելու անհրաժեշտությունից, որոնք փոքր-ինչ ջանքեր են պահանջում: Ժամանակակից մարդը, ասես, հոգնել է սոցիալական պարտականություններից և այժմ աննպատակ ոճավորման խաղերը նախընտրում է ջանք պահանջող աշխատանքի ցանկացած տեսակից: Հանգամանք, ինչի արդյունքում «պատմական երջանկության տեղը գրավում է անհատական հաճույքը, իսկ անձը դառնում է ընդամենը անհատականություն: Հասարակության՝ անձնական իմաստներով լեցուն պատմական ստեղծարարից ձևավորվում է պատմականությունից զրկված զանգված՝ կենսաբանական անհատների ամբողջություն (Մյուլեռ, 1994, էջ 280): Սա իրոք վտանգավոր միտում է, քանի որ սեփական կյանքը որպես պատմական շարունակականություն պահպանելու, այսինքն՝ պատմությունից դուրս չընկնելու համար չկա այլ միջոց, քան որոշակի կոլեկտիվ նույնականության ճանապարհը: Միայն կայուն նույնականությունն է ապահովում կեցության հաջորդականությունը (ժառանգականությունը) և սոցիալական կյանքին տալիս կուտակային գործընթացի բնույթ: Կոլեկտիվ նույնականությունից հրաժարվելու դեպքում, ինչին մեզ կոչ է անում արմատական ազատականությունը, յուրաքանչյուր անհատ դառնում է տարածության մեջ ինքնանպատակ դեգերող սուբյեկտ, իսկ յուրաքանչյուր սերունդ սկսում է զրոյից և վերջացնում է զրոյական արդյունքով՝ դառնալով հետնորդներին ոչինչ չժառանգող սերունդ:

Այսպիսով, արդի տեխնածին քաղաքակրթության զարգացման ներկա վիճակը վկայում է, որ այդ գործընթացները, իբրև օբյեկտիվ իրողություններ, մարդկանց և առանձին հանրույթներին ստիպում են ընդօրինակել

իրենց հնարավորություններին և էթնոմշակութային ավանդույթներին ոչ համարժեք չափանիշներ և արժեքային կողմնորոշիչներ, ինչը խարխլում է հասարակության ներքին համախմբվածությունը, նույնականությունը, կազմակերպվածությունը և այլն: Բանն այն է, որ հասարակական կյանքի կազմակերպման ժամանակակից մշակույթը մի կողմից մարդուց պահանջում է ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, իսկ մյուս կողմից՝ նրան դարձնում է տեխնիկայի կցորդ: Նյութական պահանջմունքների գերիշխանության ժամանակաշրջանում տեխնածին քաղաքակրթությունը աստիճանաբար փոխակերպվում է սպառման հիմքի վրա ձևավորվող քաղաքակրթության:

Եզրակացություն

Ավանդական հասարակություններին բնորոշ պայմանականությունները սահմանափակում էին մարդկանց կյանքն ու գործողությունները, քանի որ կառուցվում էին վերահսկողության անձնային հարաբերությունների վրա:

Մինչդեռ հետավանդական հասարակություններում սոցիալական խմբերի և խավերի միջև փոխազդեցությունը անդեմ անանուն է: Այլ կերպ ասած՝ վերահսկողության անձնային մակարդակը փոխարինել է վերանձնային, անդեմ հարաբերություններով:

Տեղեկատվության տարածումը և փոխանակումը վկայում է, որ արդի հասարակություններում ընթանում են տեղեկատվական նոր համակարգերի ներդրման գործընթացներ, ինչը ենթադրում է վերահսկողության բարձր մակարդակ:

Օգտագործված գրականության ցանկ

Գևորգյան, Հ., (2005) *Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ,* Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն»:

Հարությունյան, Էդ., (2006) *Ազատական - ժողովրդավարական սոցիոմշակույթը որպես կենսաոճ:* -Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ: Պրակ II, Եր., Ասողիկ:

Սողոմոնյան, Գ., (2005) *Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները,* Եր., ԵՊՀ:

Белл, Д., (1999). *Грядущее индустриальное общество.* Опыт социального прогнозирования. М.: Academia.

Василенко, И., (2010). *Политическая философия,* М.: ИНФРА-М.

Бауман, З., (2005) *Идентичность в глобализирующемся мире // Индивидуализированное общество.* М.: Логос.

Бауман, З., (1995) *От паломника к туристу. //* Социологический журнал, N4.

Гидденс, Э., (2005) *Устроение общества.* М.: Академический Проект.

Маркарян, Э., (2000) *Науки о культуре и императивы эпохи.* М.: Наука.

Маркузе, Г., (2003) *Эрос и цивилизация. Одномерный человек: Иследование идеологии развитого индустриального обшества.* М.: ООО Издательство АСТ.

Мюллер, М., (1994) *Смысловые толкования истории //* Философия истории. Антология. М.: Аспект-Пресс.

Тойнби, А., (1991) *Постижение истории.* М.: Прогресс.
Тоффлер, Э., (2004) *Третья волна.* М.: ООО Издательство АСТ.
Уэбстер, Ф., (2004) *Теории информационного общества.* М.: Аспект Пресс.

References

Gevorgyan, H. (2005) *Pilisopayutyun. Patmutyun. Mshakuyt,* Yerevan[Philosophy: History culture] HH GAA Gitutyun,- National Academy of Sciences "Science". (In Armenian)

Harutyunyan, E. (2006) *Azatakan- zhoghovrdavarakan swciomshakuyty vorpes kensavoch- Ancwumayin hasarakutyun. Sociomshakutayin pokhakerpumner* [Liberal-democratic socio-culture as a way of life. - Transitional society. Socio-cultural transformations.] Prak 2 Yr. Asoghik.(In Armenian)

Soghomonyan, G. (2005) *Ancumayin hasarakutyan sociomshakutajin pokhakerpumnery,*[Socio-cultural transformations of the transitional society] Yr. EPH, 2005 - Yerevan YSU (In Armenian)

Bell, D., (1999). Gradushee industrialnoe obshestvo. Opit socialnogo prognizirovaniya. [The coming industrial society. Experience of social forecasting.] M. Academia (In Russian)

Vasilenko, I., (2010) *Politichskaya Filosofiya,* [Political philosophy], M. INFRA-M (In Russian)

Bauman, Z., (2005) *Identichnoct v globaliziruyushemsya mire* [Identity in a Globalizing World] Individualizirobannoe obshestvo. - Individualized society. M., Logos. (In Russian)

Bauman, Z., (1995) *Ot palomnika k turistu.* [From a pilgrim to a tourist] Socialnii zhurnal, Sociological Journal N4. (In Russian)

Giddens, E., (2005) *Ustroenie Obshestva.* [Community building] M.: Akademicheskii proekt - Academic Project. (In Russian)

Markaryan, E., (2000) *Nauki o kulture I imperative Epohi.* [Cultural sciences and imperatives of the era] M.: Nauka- The science. (In Russian)

Markuze, G., (2003) *Eros i civilizaciya. Odnomernii chelovek: Isledovanie ideologii razvitog industrialnogo obshestva.* [Eros and civilization. One-Dimensional Man: A Study of the Ideology of a Developed Industrial Society] M.: ООО Izdatelstvo AST,- M.: ООО AST Publishing House. 2003(In Russian)

Muller, M., (1994) *Smislovie tolkovaniya istorii [The semantic interpretations of history*] Filosofiya istorii. Antologiya. M.: Aspect-Press,- The philosophy of history. Anthology. M.: Aspect-Press. (In Russian)

Toynbee, A. (1991) *Postizhenie istorii.* [Comprehension of history] M.: Progress, 1991 (In Russian)

Toffler, E., (2004) *Tretya Volna.* [Third wave] M.: ООО Izdatelstvo AST- AST Publishing House (In Russian)

Webster, F., (2004) *Teorii informacionnogo obshestva.* [Information Society Theories] M.: Aspekt Press,- Aspect Press. (In Russian)

Ерануи Манукяан
Преподаватель Ереванского государственного унивеситета и Международного Университета Евразия, кандитата философских наук, доцент

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ИНФОРМАЦИОННОЙ ЦИВИЛИЗАЦИИ

Обсуждая причины и последствия кризиса идентичности в условиях информационной цивилизации, нами были выделены антропологические типы современного человека (бродяга, игрок, турист, бесцельный зевака). Их основное место самовыражения––массово–потребительское общество. Последнее расширяет свободу границ и возможностей людей. С одной стороны, углубляются социальные связи и зависимости, что в конечном итоге приводит к формированию большого количества людей, находящегося под тотальным контролем. Современная техногенная цивилизация наделяет личность самостоятельной, самоуправленческой, парадоксальной природой. И это проявляется в том, что современная культура организации жизни требует творческой активности и способности самостоятельно принимать решения, а личность становится легко изменяемым звеном, “приложением” институциональных структур. А с другой стороны, усреднение условий жизни, стандартизация потребностей и интересов людей к производственным и бытовым условиям образуют однотипность в мышлении, восприятии, вкусе, что способствует формированию однородной массы.

Ключевые слова: информация, цивилизация, модерн, общество, альтернатива, концепции, социальная, парадокс, трансформации, социокультурная, идентичность.

Yeranuhi Manukyan
Lecturer at Yerevan State University and Eurasia International University, Ph.D in Philosophy, Associate Professor

THE ANTHROPLOGICAL CONSEQUNECES OF INFORMATION CIVILIZATION

The article discusses the modern trends of information civilization and the deep reestablishement of quantitative information flow. The analysis is based on the theoretical and practical conclusions made by prominnet researchers of the field. It is worth to mention that those conclusions are somewhat biasd and as a matter of fact the article attemts to solve that issue as well.

Key words: information, civilization, modern, society, alternative, concepts, social, paradox, transformations, socio–cultural, identity.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. մարտի 11–ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մարտի 12–ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. մարտի 22–ին: